# Արձանագրության 3
# ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/127 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան 02.10.2019թ.

Ժամը՝ 10:20

Մասնակցում էին

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Ա. Գասպարյան /ԳԱՊ/ |
| Հանձնաժողովի անդամներ՝ | Հ. Մարտիրոսյան /գնահատող/, Հ. Թորոսյան /գնահատող/, |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Մ. Սողոմոնյան /բացող/, Ա. Կարապետյան /բացող/ |
| | Թ.Հովեսյան |

## 1. Պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացության և 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի մասին

--------------------------------------------------------------------------------------------------------

(Ա. Գասպարյան)

1. Ընդունել ի գիտություն որ.

1.1 «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի /այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների և «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

Պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի մասնակցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունի ժամկետանց հարկային պարտավորություն և մասնակցի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը համապատասխանում է հրավերի պահանջներին:

1.2 Ծանուցվել էր 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին հրավերով սահմանված ժամկետում (երեք աշխատանքային օր) ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Մասնակիցը սահմանված ժամկետում ներկայացրել է հրավերով պահանջվող փաստաթղթերը, որոնք գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է բավարար:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5դեմ - 0:*

## 2. Ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

--------------------------------------------------------------------------------------------------------

(Ա. Գասպարյան)

Հիմք ընդունելով սույն արձանագրության 1-ին կետը՝ հանձնաժողովը որոշեց հաստատել ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքները.

| Մասնակցի անվանումը | Հայտի գնահատականը |
|---|---|
| «Կապիտալ փրոջեքթ» ՍՊԸ | Բավարար |

*Ընդունվել է որոշում՝ կողմ– 5դեմ - 0:*

## 3. ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/127 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակցի և պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

--------------------------------------------------------------------------------------------------------

(Ա. Գասպարյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունած որոշումը՝ **«ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/127»** ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարել չափաբաժնի մասով «Կապիտալ փրոջեքթ» ՍՊԸ-ին, և վերջինիս ներկայացնել **Երևանի Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի վարչական շենքի ջեռուցման համակարգի հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների ձեռքբերման** մատուցման պայմանագիր կնքելու առաջարկ,

3.2 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և սահմանել անգործության ժամկետ հինգ օրացուցային օր:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5 դեմ - 0:*

Հանձնաժողովի նախագահ՝ ------------------------------ Ա. Գասպարյան

Անդամներ՝ ------------------------------ Հ. Մարտիրոսյան

------------------------------ Հ. Թորոսյան

------------------------------ Ս. Մողոմոնյան

------------------------------ Ա. Կարապետյան

Համակարգող՝ ------------------------------ Թ.Հովեսյան